ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«26» 06 2013թ. N 152-Ա **ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՎՈՂ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի առաջին կետի «ժբ» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի N 1194 որոշմամբ հաստատված «Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերություններում շահութաբաժինների վճարման գործընթացում պետական բաժնեմասի կառավարման լիազորություններն իրականացնող մարմինների աշխատանքի կազմակերպման կարգի» 8-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 202-ն որոշմամբ հաստատված «Կանոնադրական կապիտալում պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների շահույթի բաշխման և պետության բաժնեմասից ստացվող շահութաբաժինների հաշվարկման ե վճարման կարգի» 31-րդ կետի դրույթներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ենթակայության պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների 2012 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջե վճարվող շահութաբաժինների չափերը՝ համաձայն հավելվածի:

Ֆ.ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ համընկնում է

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 26 N 1324 ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱԺՆԵՆԱՍ ՈՒՆԵՑՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՎՈՂ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ

NN	ՀՀ Շիրակի մարզպետարանի ենթակայության առևտրային կազմակերպության անվանումը	ՀՀ 2013թ. պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի գումարը՝ ըստ կանոնադրական կապիտալում պետության բաժնեմասի (դրամ)
1	«Ազատանի բժշկական ամբուլատորիա» ՓԲԸ	84000
2	«Ախուրիկի բժշկական ամբուլատորիա» ՓԲԸ	40800
3	«Ամասիայի առողջության կենտրոն» ՓԲԸ	75500
4	«Անի Պեմզայի առողջության կենտրոն » ՓԲԸ	2150
5	«Աղինի առողջության կենտրոն » ՓԲԸ	16200
6	«Արթիկի բժշկական կենտրոն» ՓԲԸ	93050
7	«Արթիկի մոր ու մանկան առողջության պահպանման կենտրոն» ՓԲԸ	402100
8	«Գյումրու արյան փոխներարկման կայան» ՓԲԸ	188400
9	««Բեռլին» պոլիկլինիկա» ՓԲԸ	79500
10	«Գյումրու Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ	866500
11	«Գյումրու Վ. Աբաջյանի անվ. ընտանեկան բժշկության կենտրոն» ՓԲԸ	36000
12	«Գյումրու թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ	191000
13	«Գյումրու Ն. Ա. Մելիքյանի անվան թիվ 2 պոլիկլինիկա» ՓԲԸ	736500
14	«Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ	60000
15	«Գյումրու «Միջազգային Կարմիր Խաչի անվան պոլիկլինիկա»» ՓԲԸ	822500
16	«Գյումրու մոր ու մանկան ավստրիական հիվանդանոց» ՓԲԸ	82500
17	«Գյումրու շտապ բժշկական օգնության կայան» ՓԲԸ	2257500
18	«Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր» ՓԲԸ	399000
19	«Գյումրու ինֆեկցիոն հակատուբերկուլյոզային հիվանդանոց» ՓԲԸ	1371500
20	«Հոռոմի բժշկական ամբուլատորիա» ՓԲԸ	156000

21	«Մայիսյանի բժշկական ամբուլատորիա» ՓԲԸ	7500
22	«Մեծ Մանթաշի առողջության կենտրոն» ՓԲԸ	28000
23	«Մարալիկի առողջության կենտրոն» ՓԲԸ	45850
24	«Մարմաշենի բժշկական ամբուլատորիա» ՓԲԸ	15150
25	«Գյումրու պաթոլոգոանատոմիական լաբորատորիա» ՓԲԸ	243500
26	«Պեմզաշենի առողջության կենտրոն» ՓԲԸ	6100
27	«Ջաջուռի բժշկական ամբուլատորիա» ՓԲԸ	67600
28	«Գյումրու Սամարիթեր հիվանդանոց» ՓԲԸ	183000
29	«Սառնաղբյուրի առողջության կենտրոն» ՓԲԸ	14750
30	«Փանիկի առողջության կենտրոն» ՓԲԸ	414000

ՀՀ Շիրակի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Խ. ՊՐՂՈՍՅԱՆ